Եգիպտոս 'ի Յուզմունս, որպէս գրէ Կարապետ վարդապետ առաջնորդ տեղւոյն ։ Այլազգիք Սիոնի արգելին ըզՔրիստոնեայս Թաղելոյ զմեռեալս իւրեանց · որպէս 'ի միում նուագի յարձակեալ 'ի վերայ եկեղեցականաց Յունաց կամէին գանակոծել զնոսա, եւ նոցա Թողեալ զմեռեալն անդ՝ փախեան, և յետ երկուց ժամուց հաճեալ զկամս նոցա՝ գնացեալ Թաղեցին զնա · և յօրէ յայնմանէ ոչ կարէր ոք 'ի Քրիստոնէից ելանել 'ի գերեզմանատուն, և դատաւորք տեղւոյն ոչ կարէին առնել ինչ, Լատինք յառաջագոյն վասն այսր բերեալ էին հրովարտակ յԱրքայէ՝ իսկ Հայք և Յոյնք 'ի վերայ այսր չփոԹի առին գիր 'ի դատաւորէն և առաքեցին 'ի Կոստանդնուպօլիս խնդրել հրովարտակ, զի մի դարձեալ յանդգնեսցին այլազգիք Սիոնի գործել զայնպիսի չարիս · (1808 · 27 Ապրիլ) ։

ԳԼՈՒԽ ԻԱ ·

Մահ Յակոբ եպիսկոպոսի ։ Փոխանորդ Պօղոս վարդապետ ։ Տաճարք Աթոռոյն ։ Գողուածի պաշխ ։ Նիւթք շինութեան ։ Գրգռութիւն Յոյն ժողովրդոց ։ Խռովութիւն այլազգեաց ռսկս շինութեան տաճարին ։ Ջինակիր Կուսակալին Դամասկոսի ։

Ի ՍՈՅՆ աւուրս փոխանորդն Երուսաղէմի Յակոբ եպիսկոպոս՝ տաղտկացեալ 'ի ծանրութենէ գործոյն հրաժարեցաւ 'ի պաշտօնէ իւրմէ, և անկաւ խօԹ 'ի մահիճս որ և վախճանեցաւ իսկ 'ի վանքն Իսկիւտարու, և մնացին անդ Մարկոս եպիսկոպոս եւ Մկրտիչ վարդապետ, որոց միաբանեալ զբոլոր գլխաւորս արհեստաւորաց մեծ բազմուԹեամբ մատուցին գիր աղաչանաց առ Արքայ Աֆ Սեբայ կոչեցեալ տեղին, յաւուր ՈւրբաԹու (1809 · յ23 Ապրիլի), վերստին դարձուցանել առ Հայս զգաղտնի յափշտակեալ տեղիս 'ի Յունաց, և այս գործ հաչակեցաւ 'ի քաղաքն ողջոյն, և զայրացեալ երկուց կողմանց սպառնել ջանային զիրեարս ։ Իսկ Յովհաննէս Պատրիարք և այլք